

շուշտ—երեւի եղել են օտարազգի թատրոններում, լսել են օտար դերասաններին, յիշում են արդեօք մեր բեմի վրայ իշխող լեզուական այս բարեկոնեան խառնակութեան հեռաւոր նմանութիւն ունեցող մի բան: Զայրոյթի և հեգնութեան առարկայ կը դառնայ մի ֆրանսիացի, գերմանացի կամ իտալացի արտիստ, որ առանց իր մայրենի լեզուն կատարելապէս տիրապետելու յանգճնի բեմ դուրս գալ: Հայ լեզու, քաջըշուած, տըրորուած, աղաւաղուած կամ արհամարհուած դրսում, փողոցում, առևտրականի խանութում, տներում, թող գոնէ նա մաքուր, անխառն մնայ բեմի վրայ: Չը գիտէ՞ք, չարչարուեցէք, սովորեցէք, ձեր աչքի առաջ, փառք Աստուծոյ, հայ լեզուի լաւնմուշը կայ յանձին տիկին Սիրանոյշի: Ինչո՞ւ իւրաքանչիւր մասնագիտութեան համար անհրաժեշտ է որոշ պատրաստութիւն, որոշ աշխատանք, միայն հայ բեմն է, որ կարելի է ոտք կոխել առանց ամենաանհրաժեշտ պայմանի—մայրենի լեզուի:

Վարչութիւնը և դերասանները հաստատ կարող են հաւատացած լինել, որ առանց լաւ հայերէնի նրանց աշխատանքը ամուլ կը մնայ:

Ա.

II Արաքսեանի թատրոնը Հաւլարարում

Նոյեմբերի 23-ին խաղացուեցին՝ առաւօտեան—Զիակոմետիի «Ոճրագործի ընտանիքը» դրաման, երեկոյեան—Դոննների «Մայրական սէր» մելօդրաման:

«Ոճրագործի ընտանիքը» պիեսի մէջ պ. Խարազեանը Կորրադօի գերը կատարելով՝ ապացուցեց վերջնականապէս, որ նրա մէջ ինքնուրոյն ոչինչ չը կայ, իսկ այն, ինչ փոխ է առել ուրիշներից, շնորհք չէ ունեցել քիչ թէ շատ կարգին իւրացնելու: Նա համարեա թէ դաճած դարձրեց իր տանջանքներով հսկայ Կորրադօին. նրա հարաւային տաք, առիւծի հոգին չէր փայլում պ. Խարազեանի խաղի մէջ. Կորրադօն մոնսիֆներէ հետ խօսելիս այնպէս կորովի ու կատաղի է, որ մոնսիֆները վախ է արտայայտում. սակայն այդ վախը դուրս եկաւ անտեղի, որովհետեւ բեմի Կորրադօի ձայնը չափազանց խեղճ էր:

Մոնսիֆների տիպը շատ գեղեցիկ կերպով վերարտադրեց պ. Վրոյրը. այդ գերը նրա ամպլուայի մէջ տեղ բռնող ամենաաջողակ դերերից մէկը պէտք է համարել:

«Մայրական սէր» մելօդրամայի գլխաւոր հերոսուհի տ.

Զարեյը դուր էր ճգնում դրամատիկական դերում փայլել. մի-թէ այսքան տարիների փորձութիւններից յետոյ տիկինը չը կարողացաւ հասկանալ իր տեղը բեմի վրայ: Ծիշտ է՝ որ Հաւլարարի թատրոնում դերասանի համար ամպլուա գոյութիւն չ'ունի, բայց իր ուժերից շատ և շատ վեր, միանգամայն անհամապատասխան դերեր ստանձնելով՝ դերասանը միայն ծիծաղի առարկայ կարող է դառնալ...

Այդ պիեսին միակ տոն տուողները պ. պ. Վրոյրն ու Բերոյեանն էին:

Նոյեմբերի 26-ին խաղացուեց Գէլի «Տրիլլի» դրաման ի նպատտ տիկին Արաքսեանի:

Բենեֆիտիանտուհին տանելի Տրիլլի էր. տեղ-տեղ (վերջին գործողութիւններում) լաւ էր, բայց ընդհանրապէս կրակից զուրկ էր տիկին Արաքսեանի խաղը. Տրիլլին վառվռուն, կայտառ բնավորութիւն է, մանաւանդ սկզբում, երբ նա ծառայում էր իբրեւ մոդէլ՝ նկարիչների համար:

Բենեֆիտիանտուհին ստացաւ ընծայ և ծաղիկներ:

Պ. Արաքսեանը օրինակելի ժեկկօ էր: Ափսոս որ շնորհալի դերասանը՝ ձայնը խզուած լինելու պատճառով շատ քիչ է երևում բեմի վրայ. մինչդեռ նա անհրաժեշտ է, մանաւանդ դերասանական ներկայ խիստ պակասաւոր կազմի մէջ:

Հրէայ երաժիշտ Սվենգալլիի դերում անմիան էր պ. Արեւեանը. մարդ հիանում, դարմանում էր՝ տեսնելով արտիստի մտածուած խաղը, որի մէջ երևում էին խորը ուսումնասիրութիւն, դերի ճշգրիտ ըմբռնումն և արտայայտելու ուժգին կարողութիւն:

Շատ տիպիկ էր անգլիական ջէնտլմէնի փոքրիկ դերում պ. Վրոյրը:

Վատ չէր և՛ պ. Բերոյեանը, բայց ցաւօք սրտի պէտք է ասել, որ վերջերս նկատուում է նրա մէջ մի խոշոր թերութիւն, այն է՝ որ դերը երբեմն հիմնաւոր չէ սովորում, ինչպէս այդ երեկոյ: Հարկաւոր է նրան և՛ հայոց լեզուի վրայ առանձին ուշադրութիւն դարձնել:

Նոյեմբերի 29-ին ներկայացուեց «Զաւակ» մելօդրաման:

Այդ պիեսը վաղուց ծանօթ է մեր բեմին և արխին ընկնելու ժամանակը վաղուց է անցկացրել արդէն: «Զաւակ»-ի հետաքրքրութիւնը միայն նրանում էր կայանում այդ երեկոյ,

որ Մաղբլէնի դերը կատարում էր տիկին Սիրանոյշը: Ի՞նչ ասել կ'ուզի, որ նա փայլեց, որպէս միշտ մեծ աջողութիւն է ունենում մեյօդրամմաներում.—էֆֆեկտը կատարեալ էր—շատերի աչքից արցունք քամեց արտիստուհին, շատերին յուզեց, շատ սրտեր տակն ու վրայ արաւ, շատ լաւ էր մանաւանդէրը իրանց դրացի Անդրէի հետ խորհրդակցում էր գնալ միասին բարոնի մօտ. այդտեղ աչքի ընկաւ տիկնոջ՝ կեանքը դիտելու և ճիշտ ըմբռնելու կարողութիւնը... սակայն կեղծ կլասսիցիզմը, որպէս միշտ, նոյնպէս և՛ այդ երեկոյ անբաժան էր տիկնոջից. տիկինը սնուել, ապրել է բեմի վրայ այդ շկոյւայի ազդեցութեան տակ, ուստի շատ դժուար է նրան ձեռք քաշել մի այնպիսի բանից, որը նրան դափնիներ է պարգեւել...

Թատրոնը համարեա թէ լիքն էր, բայց ոչ հաւաքարցիներով, այլ գլխաւորապէս ուրիշ թաղերից եկած ժողովրդով: Տիկին Սիրանոյշն ընծայ ստացաւ:

Թատրոնական սեզոնի սկզբից յաճախ յայտարարւում էր, թէ պատրաստւում է խաղացուելու Մարգարեանի փոխադրած 5 գործողութեամբ, 6 պատկերով «Ձուբէյդա կամ հարէմ» դրամա՞ն, և ահա նոյեմբերի 30-ին բոլոր պատրաստութիւնները վերջացած համարուելով՝ բեմի վրայ դրուեց այդ սիրալիրը: Չ'արժէ խօսել այդ փոխադրութիւն բովանդակութեան մասին:

Ով տեսել է «Ղարաբաղի աստղագէտը», նրա համար նորութիւն չէր կարող լինել «Հարէմ»-ի առաջին գործողութիւնն առանձնապէս և ամբողջ պիեսն ընդհանրապէս: Ինչ որ կատարւում էր «Ղարաբաղի աստղագէտ»-ի մէջ հէյդացիներին խանի վրանում, ինչ-որ ասում էր Սալիհան այդ խանին, նոյնը կատարւում, նոյնն էր ասում Ձուբէյդան Աբբաս-Միրզային «Հարէմ»-ի մէջ: Այստեղ աստղագէտի դերը մաս-մաս էին արել իրար մէջ երեք մարդիկ—Ձուբէյդայի սիրական Դաւիթ-բէգը, ներքինապետը և Ձուբէյդայի աղախինը: Անծանօթ անձընաւորութիւն չէր և՛ Սաֆֆի բանաստեղծը:

Չենք հասկանում, թէ պ. փոխադրողը, որ յայտնի է իր նոյնքան անհամ և՛ ուրիշ փոխադրութիւններով, ինչո՞վ է առաջնորդուել այդ նոր արտաբոլը կազմելիս, ի՞նչ իդէա է ղեկավարել նրան, ի՞նչ է եղել նրա նպատակը: Միթէ՞ բաւական է մի քանի տարիներ լինել սցենարիստ, ծանօթանալ կուլիսների ծակուծուկների հետ, միզանսցենի գործն ուսումնասիրել, վերջապէս դրամատիկական երկ գրելու տեխնիկայի հետ քիչ թէ շատ

ծանօթանալ, որպէսզի մարդ դրամատուրգ դառնալու իրաւունք ունենայ:

Այդ դեռ բաւական չէ, այլև տեղերի դնբը համարենք թէ երկպառակել էին (առաջին կարգը 1 ր. 50 կ.-ի տեղ 2 ր. 25 կ.), որի հետեւանքն այն եղաւ, որ ժողովուրդը պատժեց այդպէս անողին, այդքան պատրաստութիւններէց, Զանք ու ճիգերէց յետոյ թատրոնի կէսն անգամ չէր բռնուել:

Դեկտեմբերի 6-ին կատարուեց պ. Սարազեանի բենեֆիսը: Պ. Սարազեանն ընտրել էր Գուցկովի «Ուրիշ Ակոստա»-ն, սակայն այդ պիեսում փայլեց ոչ թէ ինքը բենեֆիսիանտը, այլ պ. Արաքսեանը Բեն-Ակիբայի դերում:

Մի քանիսը դերերը լաւ չէին սերտել: Ինչպէս համարենք միշտ, նոյնպէս և՛ այդ երեկոյ խեղճ հայ լեզուն նահատակոււմ էր բեմի վրայ. մի կողմ թողած թարգմանութեան վատ լեզուն, ինչպէս՝ «Հոլլանդիայում ձեզ համբերում են», «Նա օտարանում է իր հայրենակիցներից» և այլն, իրանք խաղացողներն էլ չէին խնայում: Առանց լեզուին գոնէ քիչ-շատ ծանօթ լինելու բեմ՝ դուրս գալ—առնուազն անշնորհքութիւն է:

Դեկտեմբերի 7-ին կրկնուեցին՝ ցերեկը—«Մեծապատիւ մուրացկաններ»-ը, երեկոյեան—«Զուբէյրա կամ հարէմը»-ը:

Դեկտեմբերի 10 կայացաւ պ. Բերոյեանի և պ. Սուրանեանի բենիֆիսը: Սաղացում էին Նայդենովի «Վանիւշինի գաւաղներ» դրաման և «Օրհասական գրքի» վոդվիլը:

Դահլճի գատարկութիւնն էր պատճառը, թէ ուրիշ հանգամանք էր ազդել խաղացողների վրայ,—այդ պիեսը աջող խաղ չ'ունեցաւ: Դերակատարների մեծամասնութիւնը դերերը կարգին չէր սովորել: Մի քանիսը չը գիտէին իրանց բեմ դուրս գալու և այնտեղից հեռանալու ժամանակը. չորրորդ գործողութեան մէջ յուշարարը «Սարազեան» գոչելով՝ հագիւ կարողացաւ մէկ էլ յետ բերել անհամբեր արտիստին, որը դեբբը կիսատ թողել՝ դուրս էր եկել բեմից... Հասարակութիւնը տրանջում էր, երբ բեմի վրայ մէկը միւսին ստիպում էր արտասանել իր դերը կամ շուտ անել՝ ներս գալ և ընդհատել անտեղի երկար պաուզան...

Դաշնամուր, թէ նուագող չը լինելու պատճառով չորրորդ դործողութիւնը քարեփոխել էին... պոչը խուզելով: Վերջին տեսարանը, որ ամենաէֆֆեկտաւոր տեղն է պիեսում, չափազանց սառը և անընական դուրս եկաւ: Վանիւշինի փոքր աղջիկ Անիան պէտք է զարդարուած մտնէր հօր մօտ, և հայրն ասէր՝ «զարդարուել ես» եղբօր հարսնացուի այցելութեան առիթով. բայց թատրոնի վարչութիւնը հարկ չէր համարել հոգալ շորի մասին, օրիորդ Անիան աղքերեկոյ իր աշակերտական շորերով էր, և երբ պ. Արեւեանը դարձաւ ասելու՝ «զարդարուել ես» ու տեսաւ, որ օր. Անիան (Քնարեկը) իսկի էլ զարդարուած չէ, հիասթափուեց և վարանելով՝ ասաց. «չէս զարդարուել»... Թէև այդ հարցը համապատասխան էր բեմի վրայի իրականութեան, բայց շեղումն էր պիեսից, իսկական իրականութիւնից:

Օրիորդ Սաթենիկը մեծ շնորհք ցոյց տուաւ «Օրհասական դրբիւ»-ի մէջ: Լաւ էր այդտեղ և՛ պ. Սուգանեանը, սակայն տեղ-տեղ շփոթութեան մէջ էր ընկնում:

Պ. Բերոյեանը համեստ ընծաներ ստացաւ:

Թատրոնի վարչութեան ուղադրութիւնն ենք հրաւիրում ասֆիշների և ծրագիրների տպագրութեան վրայ, որոնք միշտ քիչ են լինում անճշտութիւններով և տառասխալներով, ինչպէս օրինակ՝ «Մեծապատիւ մուրականներ, թարգմանութիւն Պարոնեանի», «Եսթեր, հեղինակութիւն Ալիսանեանի (!!!), ևայլն ևայլն: Ծրագրի մէջ որեւէ դերի դիմաց դրուած է մի անուն, բայց բեմ է դուրս գալիս բոլորովին ուրիշ անձնաւորութիւն. այդ երեկոյ օր. Հայկանուշը ըստ ծրագրի պէտք է կատարէր երեք դեր (Ակուլինայի դերն էլ—որի անունն իսպառ ջնջել էին—նա էր կատարում, ուրեմն չորս դեր...), բայց իրօք կատարեց երկու դեր:

Դեկտեմբերի 13-ին Հայոց Դրամատիկական Ընկերութեան խումբը Հաւլարարում կրկնեց Արտիստիկական թատրոնում այս տարի խաղացուած Սումբատովի և Նեմերովիչ-Դանչենկօի «Բազէներ և ագուաներ» դրաման *):

Սաղն անցաւ մեծ աջողութեամբ. գերակատարներն ամենքն իրանց գեղերում էին:

Զինուորական երաժշտական խումբը նուագեց պ. Արաքսեանի ղեկավարութեամբ... որի համար ղեկավարը ծափահա-

*) Այդ պիեսի մասին տես «Մուրճ»-ի անցեալ համարը:

րուեց հասարակութիւնից: Սակայն մենք խորհուրդ կը տա-
յինք պ. Արաքսեանին ղեկավարել և լաւ ղեկավարել իր դե-
րասանական խումբը, որն՝ ինչպէս լսում ենք՝ միանգամայն
յանձնուած է ճակատագրի տնօրինութեանը...

Դեկտեմբերի 14-ին տիկին Սիրանոյշի մասնակցութեամբ
ներկայացուեց «Մեղէա» դրաման:

Մեղէան տիկին Սիրանոյշի ամենաաջող դերերից մէկն
է, եթէ ոչ ամենաաջողը: Այդ երեկոյ տիկինը ցոյց տուաւ իր
արտիստիկական խոշոր տաղանդի բոլոր ուժգնութիւնը: Ամ-
բողջ դահլիճը կախարդուած դրութեան մէջ էր գտնուում ներ-
կայացման ընթացքում. նա արտիստուհու հետ վերապրում էր
Մեղէայի թշուառութիւնը՝ մերթ սարսափած, մերթ շահագրգը-
ռուած ու վերացած, մերթ լքուած ու զայրացած: Տիկնոջ պատ-
ճառած էստետիկական հաճոյքն այդ երեկոյ այն բացառիկ
հաճոյքներից է, որոնք երկար ժամանակ չեն մոռացուում:

Միւս դերակատարներն իրանց տեղերում էին, բացի պ.
Խարազեանից... Պ. Խարազեանի բեմ ընկնելը մենք վերջնակա-
նապէս համարում ենք մի թիւրիմացութիւն:

Այդ երեկոյ պ. Արաքսեանը նորից առժամ ղեկավարեց
երաժշտական խումբը: Խորհուրդ չէինք տալ պարոնին թողնել
բեմը և դառնալ կապելմայստեր, եթէ նա այդպիսի դիտաւո-
րութիւն ունի:

Հաւաքարի թատրոնի առանց այն էլ հետաքրքրի կեան-
քում այդ երեկոյ ներմուծուել էր մի նորութիւն ևս. ներկայա-
ցումը վերջնապէս թատրոնի ղեկավարը պատնէշ էր դրել շոր
կախելու առանց այն էլ խիստ նեղ տեղի առաջ և ինքը մի
ոստիկանի ու մի այլ պարոնի հետ յետը կանգնել և արգելե-
լով հասարակութեանը խմբովին մտնել պատնէշի յետը՝ մէկ-
մէկ էր ներս թողնում շոր վերցնելու. մի կապել'դիներ էր աշ-
խատում, միւսները պարապ կանգնած էին՝ մեծ պահանջ չը
լինելու պտաճառով: Փոքրիկ թիւրիմացութիւններ տեղի ունե-
ցան հասարակութեան և պատնէշը պահպանողների մէջ... այս
վերջիններից մէկի բերանով հասարակութիւնը մեծարուեց
«անասուններ» մականունով... Շատերն ստիպուած էին մի ժամի
չափ սպասել, մինչև հերթը կը հասնի իրանց շորերն ստանալու:

Դեկտեմբերի 19-ին տիկ. Զաբէլի բնէֆիսին խաղա-
ցուեց Կամուետտիի «Բոյր Թերեզա» դրաման:

Այդ օրուայ ներկայացման հետաքրքրութիւնը նրանում էր կայանում, որ պարոն Վրոյրը կատարում էր կնոջ դեր. այնպէս որ քոյր Զուգէպպայի քաղցրահնչիւն բարիտոնը շոյում էր հանդիսականների լսելիքը: Պ. Վրոյրը երեւի ժամանակ չ'ունենալու պատճառով զանց էր առել գոնէ երեսը սափրել, այնպէս որ հանդիսականներից մի քանիսը զարմանում էին, կարծելով՝ թէ օտար երկրում (Իտալիայում) տղամարդիկ և կանայք հագնւում են միատեսակ: Սակայն՝ ինչպէս երևում էր, պ. Վրոյրն այնքան էլ գոհ չէր, որ կնոջ դեր է կատարում, ուստի զժկամակութեամբ էր արտասանում իր խօսելիքը. այդ պատճառով էր երեւի, որ 3 գործողութեան մէջ տիկին Զարէլն ստիպեց պ. Վրոյրին ասել՝ «սո՛ւրբ կոյսեր, մօտեցէ՛ք, աղօթեցէ՛ք»...

Ինչո՞վ բացատրել այս բոլորը:

Տիկ. Զարէլն ընծայ ստացաւ: